




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891 . 995

P- 95 1922

A detailed black and white illustration of a group of people, including men and women of various ages, are shown in a state of intense study. They are holding and reading books of various sizes. The style is reminiscent of mid-20th-century propaganda art, with strong lines and a focus on the act of reading. The illustration frames a central white rectangular area containing text.

ՀԱՅԻՐՆ
ԳԻՒ
ՇԱՆՈՒՄԻՆ
Հ. ՌՈՒԲԵՆԱՅԱՆ

891.99v
12-95

Հունիս 1923

2011-0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարները բոլոր յերկրների, միացե՛ք.

891.990.

թ - 95

կր

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՏԵՐՆ ՈՒ ԾԱՌԱՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1925.



7969-53

№ 245.

Գրառեպլար № 1974.

Տիրաժ 5000.

Պետհրատի յերկրորդ տպարան Յերևանում:



Յերկու աղքատ ախպեր են լինում: Մտածում են ինչ ա-
նեն, վոր իրենց տունը պահեն: Վճռում են, վոր փոքրը տանը
մնա, մեծը գնա մի ունեորի ծառա մանի, ոտճիկ ստանա զրկի տուն:

Փոքրը մնում է տանը, մեծը վեր է կենում գնում մի հա-
րուտ մարդու մոտ ծառա մտնում:

Ժամանակ նշանակում են մինչև մին ել զարնան կըկվի
ձեն ածելը: Բայց հարուտը մի պայման է դնում ծառային:
Ասում է՝ «մինչև են ժամանակը մեղանից վորը բարկանա—նա
տուժի: Թե դու բարկանա—դու հազար մանեթի տուգանք տաս
ինձ, թե յես բարկանամ—յես կրտամ»:

— Բայց յես հազար մանեթ չունիմ,—ասում է ծառան:

— Բան չկա. փոխարենը ինձ տասը տարի ձրի կըծառայես:

Աղքատ աղեն մին վախենում է ես տարորինակ ու կաս-
կածելի պայմանից, մին ել մտածում է, թե բան չըկա, ինչ
պետք է պատահի: Ինչ ուզում են ասեն կամ անեն, յես եմ
ու չեմ բարկանա, պրծանք զնաց: Իսկ թե իրենք կըբարկա-
նան, թող իրենք տուժեն իրենց զրաժ պայմանով:

Համաձայնվում է: Պայմանը կապում են ու մտնում է
ծառայության:

Մյուս որը վաղ տերը վեր է կացնում ծառային ու զրկում
է իր քրոջ հնձելու:

— Գնա, ասում է, քանի լուս է հնձի, վոր մութն ընկնի,
կըզատ:

Ծառան գնում է ամբողջ որը հնձում, իրիկունը հոգնած
գալիս է տուն: Տերը հարցնում է,

— Եղ սւր յեկար:

— Դե, արեւը մեր մտալ, յես ել յեկա տուն,—պատասխանում ե ծառան:

— Չե, եղպես չի: Յես քեզ ասել եմ՝ քանի լուս ե, պետք ե հսձես: Արեւը մեր մտալ, բայց տես, նրա ախպեր լուսնյակը դուրս յեկալ: Սա ինչ պակաս ե լուս տալի...



— Եղ վոնց կրլինի...—զարմանում ե ծառան:

— Հը՞, դու արդեն բարկանում ես,—հարցնում ե տերը:

— Չե, չեմ բարկանում... յես միայն ասում եյի՝ հոգնած եմ... Մի քիչ հանգստանամ...—կրկրկրում ե վախեցած ծառան ու գնում ե նորից հսձելու:

Հսձում ե, հսձում, մինչև լուսնյակը մեր ե մտնում: Բայց

լուսնյակը մեր ե մտնում թե չե, դարձյալ արեգակն ե դուրս գալի: Ծառան ուժասպառ ընկնում ե արտում:

— Վայ, քու արտն ել հարամ ըլի, քու հացն ել, քու տված ոռճիկն ել...—սկսում ե հայհոյել հուսահատված:

— Հը՞, դու բարկանում ես,—կանգնում ե գլխին հարուստը: Յերբոր բարկանում ես, մեր պայմանը պայման ե: Ել չասես թե քեզ հետ առանց իրավունքի վարվեցին:

Ու պայմանի ուժով ստիպում ե, վոր ծառան կամ հազար մանեթ տուգանք տա, կամ տասը տարի ձրի ծառայի:

Ծառան մնում ե կրակի մեջ: Հազար մանեթ չունեն, թե տար, հոգին ազատ անեն, տասը տարի ել ես տեսակ մարդու ծառայելը անկարելի բան եր: Միտք ե անում, միտք, վերջը հազար մանեթի պարտամուրհակ ե տալի հարուստին: ու ձեռք դառարկ վերադառնում տուն:

— Հը՞, ինչ արիր,—հարցնում ե փոքր ախպերը: Ու մեծ ախպերը նստում ե, գլուխն յեկածը պատում, ինչպես վոր պատահել եր:

— Բան չըկա, ասում ե փոքրը, դարդ մի անի. դու տանը կաց, հիմի ել յես գնամ:

Վեր ե կենում, հիմի ել փոքր ախպերն ե գնում, ծառա մտնում ելի նույն հարուստի մոտ:

Հարուստը դարձյալ ժամանակը վորոշում ե մինչև գարնան կրկվի ձեն ածելը, ու պայման ե գնում, վոր յեթե ծառան բարկանա հազար մանեթ տուգանք տա կամ տասը տարի ձրի իրեն ծառայի, իսկ թե ինքը բարկանա, հազար մանեթ տա ու են ուրից ել ծառան ազատ ե:

— Չե, եղ քիչ ե,—հակառակում ե տղեն:—Թե դու բարկանաս—դու ինձ յերկու հազար մանեթ տաս, թե յես բարկանամ—յես քեզ յերկու հազար մանեթ տամ, քսան տարի ձրի ծառայի:

— Լավ,—ուրախանում ե հարուստը: Պայմանը կապում են, ու այժմ ել փոքր ախպերն ե մտնում ծառայության:

— Առավոտը լուսանում է, ես ծառան վեր չի կենում տեղիցը: Տերը դուրս ե գնում, տուն ե գալիս, ես ծառան դեռ քնած ե:

— Այ տղա, դե վեր կաց, ե, որը ճաշ դառավ:

— Հը՞, բարկանում ես դու... — գլուխը վեր ե քաշում ծառան:

— Ձե, չեմ բարկանում, — վախեցած պատասխանում ե տերը, — միայն ասում եմ՝ պետք ե արտը գնանք հնձելու:

Վերջապես ծառան վեր ե կենում, սկսում ե տրեխները հագնել: Տերը դուրս ե գնում, ներս ե գալիս, սա դեռ տրեխները հագնում ե:

— Այ տղա, դե շուտ արա, հագի յե...

— Հը՞, հո չեմ բարկանում:

— Ձե, ով ե բարկանում, յես միայն ուզում եյի ասել՝ ուշանում ենք:

— Հա, եդ ուրիշ բան ե. թե չե պայմանը պայման ե:

Մինչև ծառան տրեխները հագնում ե, մինչև արտն են գնում, ճաշ ե դառնում:

— Ել ինչ հնձելու ժամանակ ե, — ասում ե ծառան, — տեսնում ես ամենքն ել ճաշում են. ամենք ել մեր ճաշն ուտենք, հետո:

Նստում են, ճաշն ուտում: Ճաշից հետո ել ասում ե՝ «մըշակ մարդիկ ենք, պետք ե մի քիչ քնենք հանգստանանք թե չե»: Գլուխը կոխում ե խոտերի մեջն ու քնում մինչև իրիկուն:

— Տո, վեր կաց ե, մթնեց ե, ուրիշները հնձեցին, մեր արտը մնաց... վա՛յ քու դեռ դեռ դրկողի վիզը կոտրի, վա՛յ քու կերածն ել հարամ ըլի, քու արածն ել... Ես ինչ կրակի մեջ ընկա... — սկսում ե գորգուալ հուսահատված տերը:

— Հը՞, չլինի՞ թե բարկանում ես, — գլուխը վեր ե քաշում ծառան:

— Ձե, ով ե բարկանում, յես ես եյի ասում թե մթնել ե, տուն գնալու ժամանակ ե:

— Հա, եդ ուրիշ բան ե, գնանք. թե չե հո մեր պայմանը գիտես. վա՛յ նրա մեղքը, ով բարկացավ:

Գալիս են տուն: Տեսնում են մի հյուր ե յեկել:

Ծառային ղրկում ե թե՝ գնա մեր վոչխարներից մինը մորթի:

— Վորը, — հարցնում ե ծառան:

— Վորը կըպատահի:

Ծառան գնում ե: Մի քիչ հետո մարդիկ վազելով լուր են



բերում հարուստին, թե՛ հասի, վոր քու ծառան ամբողջ հոտդ կոտորեց: Ես հարուստը վազում ե, տեսնում ե՝ ճիշտ վոր ինչ վոչխար ունի, բոլորը ծառան մորթել ե: Գլխին տալիս ե ու գոռում.

— Ես ինչ ես արել, ա՛յ անաքանդ, քու տունը քանդվի, ինչ իմ տունը քանդեցիր...

— Դու ասիր՝ «վոր վոչխարը պատահի մորթի». մորթոտեցի — ուրիշ ավել պակաս ի՛նչ եմ արել, — հանգիստ պատասխանում ե ծառան, — բայց կարծեմ դու բարկանում ես...

— Ձե, բարկանում չեմ, միայն ավստոս գալիս ե, վոր եսքան ապրանքս փչացավ...

— Լավ, վոր բարկանում չես, ել կրծառայեմ:

Փոքր ախպերն եսպես մի քանի ամիս, մինչև ձմեռը, ծառայելով ես հարուստին՝ իրավ վոր տնաքանդ ե անում, հասցնում հուսահատության դուռը: Հարուստը մտածում ե՝ ինչ անի, վոնց անի, վոր ես ծառայիցն ազատվի: Պայման ե կապել մինչև մին ել գարնան կրկվի ձեն ածելը, այն ինչ դեռ նոր են մտել ձմեռը, դեռ վոթտեղ են գարուն ու կրկուն...

Միտք ե անում, վերջը մի հնար ե մտածում: Կնոջը տանում ե անտառում մի ծառի վեր հանում ու պատվիրում վոր «կուկու» կանչի: Ինքը գալիս ե ծառային տանում թե՛ արի գնանք անտառը վորսի: Հենց անտառն են մտնում թե չե, հարուստի կինը ծառի վրայից կանչում ե—«կուկու, կուկու...»:

— Ըհը՛, աչքդ լուս,— դիմում ե ծառային տերը. կրկուն կանչեց, ժամանակը լրացավ...

Տղեն գլխի յե ընկնում տիրոջ խորամանկությունը:

— Ձե, ասում ե, ով ե լսել վոր տարու ես յեղանակին, ձմեռվա կեսին, կրկուն ձեն ածի, վոր սա ձեն ե այծում: Յես պետք ե ես կրկվին սպանեմ, սա ինչ կրկու յե...

Ասում ե ու հրացանը քաշում դեպի ծառը:

Տերը գոռալով ընկնում ե հրացանի առաջը, սկսում ե կովել ու անիծել նրան ծառա բռնելու ուրը:

— Հը՛, չբլինի թե բարկանում ես...

— Հա, ախպեր, հերիք եր, ասում ե հարուստը. արի ինչ տուգանք տալու յեմ տամ, քեզանից ազատվեմ: Իմ դրած պայմանն ե—յես ել պետք ե տուժեմ: Հիմա նոր եմ հասկանում են հին խոսքը՝ թե «մարդ ինչ վոր անի, իրեն կանի»:

Եսպես փոքր ախպերը մեծ ախպոր տված պարտքի թուղթը պատռում ե, հազար մանեթ ել առնում, դեռ տված ենքան փասս ու տանջանքն ել ավել— ու վերադառնում ե իրենց տունը: Ու են որվանից հարուստը ել վոչ են տեսակ պայման ե կապում, վոչ ել ծառային զրկում լուսնյակի լուսով իր արտերը հնձելու:



ՀՀ Ազգային գրադարան



NL0401069

9180